

տուրիւններուն մասին, ստուգելու շատ ուրախալի է, եւ պատիւ մ'է բոլոր եղիպտահայ արուեստագէտներուն:

Հետեւելով Լա Սըմէն Էմիլիէի բացառիկ թիւին, հոս համառօտիւ կենսագրական դիմերը կու տանք Եղիպտահայ արուեստագէտներուն:

ՏԻՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ բնիկ եղիպտահայ, ծնած է 1882ին. իր արուեստագէտի կոչումին առաջին դիմերը կը սորվի Ե. Տէմիրճեանի մօտ: Դեռ երիտասարդ, ան Փարիզ կը մեկնի, ու հինգ տարի Ժիլլիան կաճառին մէջ ուսանելէ ետք, եռանդուն նուիրումով կը սկսի արտադրել: 1929ին՝ Փիքասսոյի, Մաթիսի եւ Պրաքի հետ կը մասնակցի Կալլերի Քարմինի մէջ Անտրէ Սալմոնի կազմակերպած ցուցահանդէսին: Այնուհետեւ ուրիշ առիթներով տուած է ցուցահանդէսներ իր գործերուն: Փարիզ եղած է Տ. Կարապետեանի արուեստագէտի ներշնչումին վառարանը. մեծ հիացող մը կ'ըլլայ մանաւանդ Սէզանի: Գահիրէի Արզի Գեղարուեստից Թանգարանը ապահովուցած է անոր նկարներէն բաւական ստուար թիւ մը: Փարիզ ու Գահիրէ Տ. Կարապետեանի կեանքին եւ արուեստագէտի կեանքին երկու հանդրուանները կ'ըլլան, ան արեւելի եւ արեւմուտքի երկու մայրաքաղաքները՝ արուեստագէտի տաղանդով ու ճաշակով իրարու կը հանդուցէ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՍԱՐՈՒՆԱՆ ինքնատիպ արուեստագէտը, հանճարեղ երգիծաբան ծաղրանկարիչը, որուն ծննդավայրն է Արտանոյշ (Կովկաս), ուր ծնած է 1898ին: Պաթումէն, ուր իր նախնական ուսումները բնակ է, հօրը հետ 11 տարեկանին կ'անցնի Վոսպորի ափերը: Աղ. Սարուխան որքան Կովկասցի, նոյնքան եւ թերեւս ալ աւելի Պոլսեցի է: Ան՝ երկրորդական ուսումը կը լրացնէ այս մայրաքաղաքին մէջ, կը փարի իր արուեստագէտի կոչումին:

Կրնանք ըսել թէ Սարուխան ինքնաշխատութեամբ արուեստագէտի ուղին ձեռք կ'առնէ: Եռանդուն ու դադափարապաշտ աշխատող մըն է. ձեռագիր երգիծաթերթ մը հանելով՝ կը սկսի զանոնք ցրուել ծանօթներու շրջանակին մէջ. կամաց կամաց իր դժագրութիւնները սիրալոյսով կ'ընդունուին Պոլսոյ զանազան թերթերուն մէջ՝ ամէնուն ծիծաղ, հետաքրքրութիւն ու հիացում պատճառելով: Սարուխան հանճարեղ դժագրութիւններով կ'աշխատակցի նաեւ Պոլսոյ Հայ Սկսում կիսամսեայ թերթին. 1921-22ի թերթօնը է. Սալկարի « 2000 մղոն Ամերիկայի ներքեւ » պատմութիւնը՝ Աղ. Սարուխան աւելի հետաքրքրական ու հաճելի կը դարձնէ իր ինքնահնար պատկերներով:

1923ին՝ Աղ. Սարուխան արուեստագէտի իսկական յարմարութիւնը ու նկարագիրը զարգացնելու համար Վիեննա կ'երթայ. հոն երկու տարի կ'ուսանի Գծադրական Արուեստից Հաստատութեան մէջ: Վոսպոր այլեւս կը կորսնցնէ իր հրապոյրը. արուեստագէտը կը նախընտրէ միջավայր մը ուր կարենար ազատօրէն ոյժ տալ իր թըռուիչին: Կ'անցնի Եղիպտոս, եւ անմիջապէս երգիծաթերթ մը կը հրատարակէ « Հայկական Սինէմա » անունով. շուտով հանրածանօթ կը դառնայ:

Աղ. Սարուխան 1927ին Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի մէջ կու տայ իր առաջին ցուցահանդէսը, որ խանդավառ ընդունելութիւն մը կը գտնէ: Ատուֆ Նօէլ՝ Լը Քուրիէ տը Քէրի տնօրէնը, գրուատալից տողերով կ'արտայայտուի՝ տաղանդաւոր արուեստագէտին մասին: Նախ երկար տարիներ ան կ'աշխատակցի Բոգ Էլ Եուսէֆ հանդէսին, եւ յետոյ Աֆիէր Սաա հանդէսին՝ որուն մէջ կ'երեւին ցարդ իր հնարամիտ դժագրութիւնները: Գահիրէի՝ արաբական, հայկական, ֆրանսական այլեւայլ թերթեր, հանդէսներ՝ մրցանքով կ'արտապոկեն իր հանճարեղ ծաղրանկարները:

Ատեն մը Աղ. Սարուխան Գահիրէի մէջ կը հրատարակէ նաեւ « Կարաւան » հանդէսը որ երեք տարի միայն կը շարունակուի:

1937ին ան կու տայ իր երկրորդ ցուցահանդէսը, ուր ինքնատիպ եւ յատկանշական դէմքերը, ծաղրանկարները՝ տաղանդաւոր դժագրիչի իր կարողութիւնը եւ յաղթանակը կը ցուցադրեն:

1928ին « Ամէնուն Տարեցոյցը » արձագանքը կ'ըլլայ Աղ. Սարուխանի տարած յաղթանակին եւ կ'արտայայտէ անոր արժէքաւոր ծաղրանկարներէն մէկ քանին: Մեծ ծաղրանկարչին գլուխ դործոց աշխատութիւնն է « Ընկեր Փանչունի » պատկերազարդումը. Օտեանի հանրածանօթ գործը կրկնակի ուժեղ դիմ ու հոգի ստացած է Սարուխանի դժագրութիւններով: Ծաղրա-նկարած է նաեւ վերջին համաշխարհային պատերազմը « Մէք Կէր » տիտղոսը կրող հատորին մէջ:

Աղ. Սարուխան է միանգամայն թափանցող հոգեբան, անոր ամէն մի նետած գիծերու ձեւին մէջ կ'ապրի իր պատկերածը: Կծած ենթակային հոգին ու նկարագիրը: Հայ արուեստագէտներուն մէջ՝ Աղ. Սարուխան միակ ծաղրանկարիչ՝ ստեղծող միտք ու հեղինակութիւն է:

ՕՆՆԻԿ ԱԻԵՏԻՍԵԱՆ. — Ահաւասիկ ուրիշ կարող միտք մը որ Քէմալական շրջանի չիօթ ու տաղնապալից օրերուն՝ արուեստագէտի իր կոչումն եւ ուղին գտած եւ ատոր մէջ խորացած է:

Աւետիսեան ծնած է Պրուսա 1898ին, բայց Պոլսի սկսած է դպրոցական ընթացքը, ու հոն աւարտած իր միջնակարգ վարժարանի ուսումները 1915ին: 1921ին՝ կը մեկնի Վիեննա ու կը մտնէ Գծադրական Հաստատութիւնը, ուր չորս Արուեստից Հաստատութիւնը, ուր չորս տարի ուսանելէն ետք կը յաջողի Վիեննայի Արուեստագէտներու Միութեան տարեկան նկարահանդէսին մասնակցել: Աւետիսեան կանուխէն ցոյց կու տայ կարող արուես-

տագէտի մը ցայտուն ձիրքերը: Հրապուրուած Հոմի անունէն 1925ին կ'անցնի հոն. երկու տարի կը հետեւի Փրոֆ. Քորոմալտիի նկարչութեան ընթացքին, վկայական կը ստանայ 1927ին, եւ նոյն տարին իր Օֆորթմերով կը մասնակցի Հոմի տարեկան Սալոնին, եւ հոն գտած յաջողութեան վրայ կը հրաւիրուի նաեւ Ֆիլոմէի Միջազգային Գեղարուեստից ցուցահանդէսին մասնակցելու: Վիեննայի ալ իր եղական գեղեցկութիւններէն բան մը կ'աւելցնէ Աւետիսեանի բեղուն մտքին վրայ: Կը ճամբորդէ Սուրիա, Պաղեստին, Երուսաղէմի վանքին հայկական ձեռագիրներու մանրանկարները կը գրաւեն Աւետիսեանի բոլոր ուշադրութիւնը: Ան՝ 1929ին Գահիրէ կու գայ կը հաստատուի, ուր տարեկան նկարահանդէսներուն միշտ կը մասնակցի, ինչպէս նաեւ Լոս Անճելոսի միջազգային ցուցահանդէսին, 1930ին Պուրթէլի հայկ. գեղարուեստի ցուցահանդէսին իր չորս գիծ արժէքաւոր նկարներով, որոնց մասին ժամանակին ակնարկութիւն ըրած էր նաեւ « Բագրևալէպ »: Աւետիսեան ատեն մը կ'ապրէ իր գտնուի, եւ թերեւս նպատակաւոր կերպով՝ լրջօրէն նուիրուելու համար իր արտադրութեանց, ու երբ 1943ին կը դառնայ Գահիրէ, հոն կը ցուցադրէ իր նոր գործերը: 1945ին՝ Գահիրէի Արզի Գեղարուեստից Թանգարանը իր արժէքաւոր նկարներու շարքին մէջ կը գետեղէ Աւետիսեանի մէկ կտուր « Սուզը »:

Օննիկ Աւետիսեան իր նկարներու գոյնին ու զօնուն մէջ կը քանայ դնել նաեւ հայկական, ուրոյն ազգային շունչ ու հոգի, եւ շատ իրաւամբ, հայ նկարիչ արուեստագէտներուն մէջ թերեւս ինքն է որ ամէնէն աւելի խնամքով ուսումնասիրած է հայ մանրանկարչութիւնը, վերապրեցնելու համար կարծես մեր հին մանրանկարչութեան վարպետներու՝ Բոսլիւնի, Պիծակի, Նաղաշի ու նմաններու հոգին ու վրձինը:

